ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2024թ. № 447

ՌԱՖԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-0244-0010 ԵՎ 06-006-0244-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15022018-06-0026 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի թիվ 2316206 վկայականները, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06999MUTC33G) և Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանի (ծնված՝ 20.10.1977թ.) դիմումը՝ որոշում եմ.

1. Միավորել Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, Սպիտակ ք., Ա. Մանուկյան փողոց, 5/2 ավտոտեխսպասարկման կայան» և «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք. Ա. Մանուկյան 5/4 հողամաս» հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0244-0010 և 06-006-0244-0011 կադաստրային ծածկագրերով 0,0064 և 0,01215 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը:

2. Սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքին տրամադրել «Համայնք Սպիտակ, ք. Սպիտակ, Այգեստան թաղամաս, 2/2 ավտոտեխսպասարկման կետ» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. ապրիլի 23
ք.Սպիտակ